Տեսակէտ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Արեւմտահայերէնի պահպանման եւ զարգացման

Նշան Որբերեան
(«Մեսրոպեան Ուխտ» լեզուապահպանական միութիւն)

Նիւթը ներկայացուում է երկու խնդիրների լուծման առաջարկներով,
-- Արեւմտահայերէնի պահպանման հարցեր
-- Արեւմտահայերէնի միակերպ գրաւորի հարցեր

Արեւմտահայերէնի պահպանման հարցեր

Ա) Հոչակուած պետական քաղաքականութիւնը

Մեր գրական երեք լեզուաճիւղերից մէկի՝ *արեւմտահայերէնի եւ այդ լեզուի շնորհիւ այդ լեզուն կրողի ինքնապահպանման ու դրանով սփիւռքի պահպանման հիմնախնդիրների* առթիւ մեր օրերում արդէն ծաւալուած **նոր գործընթացը դարձել է պետական քաղաքականութիւն:** Դրա ապացոյցն է՝ ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի (ԳԱԱ) կառոյցում սփիւռքահայ անդամներ ընտրելը եւ *սփիւռքի հարցերով* բաժին հիմնելը, նոյն ԳԱԱ Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի հաստատութեան (ինստիտուտի)՝ *արեւմտահայերէնի* բաժանմունքի եւ դրան կից՝ սփիւռքահայերից կազմուած խմբակի ստեղծումը, Երեւանի Պետական Համալսարանի բանասիրական բաժնում արեւմտահայերէնի ամբիոնի բացումը, սփիւռքի նախարարութեան կողմից տարբեր բնագաւառների վերաբերող համահայկական կառոյցների ստեղծումը (եւ դրանց հետ միասին՝ համաժողովները): Միաժամանակ սկսուել է անթաքոյց կերպով պաշտօնապէս ճանաչել ու գնահատել համազգային խնդիրներում միջազգային մակարդակով սփիւռքի ցուցաբերած *սատարողական (լոբբիստական)* դերը, նաեւ աշխարհում մեր ազգային մշակոյթի ներկայացնելն ու տարածելը, երկրի համար ներդրումային հարցերում օտարներին ներգրաւելը, ինչպէս նաեւ նիւթական լայն աջակցութիւնը հայրենիքին ու Արցախին: *Սրանք վկայում են պետութեան եւ հայրենի մտաւորականութեան մի որոշ, փոքր խաւի կողմից արեւմտահայերէնի եւ արեւմտահայութեան պահպանման կարեւորութեան գիտակցման մասին:* Վերջին մէկ եւ կէս տասնամեակում մեր պետութեան ղեկավարների յայտարարութիւնները, թէ՝ առանձին Հայաստանը, ըստ սպորտային տերմինաբանութեան, մի քաշային կատեգորիա է, իսկ սփիւռքի հետ միասին այլ՝ աւելի բարձր քաշային կատեգորիա, փաստում են սփիւռքահայութեան պահպանման եւ նրա կեանքի հնարաւորինս երկարաձգման համար քաղաքական նոր վարդապետութեան (դոկտրինայի) ձեւաւորման սկզբնաւորումը: Այս ամէնը կարելի է համարել որպէս հետեւանք՝ սփիւռքի հետ միասնականութեամբ «Մէկ ազգ, մէկ հայրենիք»՝ թէեւ առայժմ կէսկատար, կարգախօսի: Միաժամանակ, սրան զուգահեռաբար հետեւեց *դատապարտումը* խորհրդային նախկին տարիներին մշակուած ու արմատաւորուած *անիրաւ գործելակերպի այն քաղաքականութեան,* որն արհամարում էր ազգի միւս կէսը կազմող հատուածի գոյութեան փաստի կարեւորութիւնը, հանդէս բերելով նաեւ այդ նոյն հատուածի կերտած հերոսական պատմութեան ու գիտութեան, հարուստ գրականութեան ու թատրոնի, երաժշտութեան ու երգի, նկարչութեան (ներառեալ մանրանկարչութեան) ու

արուեստի միւս ճիւղերի դրսեւորումների նկատմամբ *գիտակցուած մի լռութիւն:* Ցաւօք, դեռեւս այսօր էլ հայրենիքում կան գրական արեւմտահայերէնի խնդրի նկատմամբ արհամարանք, անհասկացողութիւն եւ անտարբերութիւն ցուցաբերողներ, որովհետեւ հայրենիքում դեռ գործնականում ըստ արժանւոյն չի քարոզուել *արեւմտահայերէնի եւ ռարեւմտահայերի տեղն ու դերը մեր ազգային պատմութեան կեանքում:*

Բ) Արեւմտահայերէնի կարեւորութիւնը եւ այն կորցնելու վնասները

---Յիշենք, որ աշխարհաբար գրական լեզուների առաջացման հարցում, ժամանակի առումով, առաջնութիւնը պատկանում է հէնց արեւմտահայ գրական լեզուին: *Այդ լեզուաճիւղի շնորհիւ է նաեւ, որ մինչեւ այսօր պահպանուել է մեսրոպեան հիմքով դասական ուղղագրութիւնը:* ***Այս գրական լեզուն ժամանակին եղել է ազգի մեծամասնութեան լեզուն եւ հնչել է մեր պատմական հայրենիքի տարածքի 2/3 մասում,*** **ինչպէս նաեւ ի տարբերութիւն արեւելահայերէնի, աշխարհում ունեցել է աւելի լայն ճանաչում ու տարածում՝ գործածուելով Մերձաւոր Արեւելքից մինչեւ Ամերիկաները, Հնդկաստանից մինչեւ Եւրոպաները, համարուելով նաեւ այդ երկրներում հայերէնը գիտականօրէն ուսումնասիրող հայագիտական կեդրոնների եւ օտար լեզուագէտների լեզուն:** Գնահատենք փաստը, որ Արեւմտեան Հայաստանի հող ու ջրից են ծնուել ազգ կերտող Ս. Մաշտոցն ու պատմահայր Խորենացին, սրբացուած Նարեկացին ու դեռ չսրբացուած Անդրանիկը, Մխիթարեան հայագէտները եւ ազգային մտաւորական ընտրանիի (էլիտար խաւի) շատ ու շատ ուրիշ ներկայացուցիչներ:: Արեւմտահայերէնով ստեղծուել է եւ ստեղծւում է համաշխարհային մակարդակի մշակոյթ ու գրականութիւն: Թուարկելը երկար կը լինի:

--- ***Կորցնելով արեւմտահայերէն գրական լեզուն, կորցնելու ենք նաեւ այդ լեզուն կրող ժողովրդին,*** որովհետեւ ապացուցումից վեր (աքսիոմատիկ) ճանաչուած ճշմարտութիւն է, թէ՝ *լեզուն ապրում է, եթէ կայ այդ լեզուն կրողը եւ հակառակը՝ լեզուն կրողը յարատեւում է, քանի դեռ ունի իր լեզուն:* ***Կորցնելով արեւմտահայերին ու արեւմտահայերէնը՝*** **մենք կորցնելու ենք մեր ինքնութիւնը փաստող ընդհանուր արժեհամակարգի շատ կարեւոր հատուածներ՝*** ***մեր պատմութեան, մշակութային հարստութեան եւ ազգագրական անկրկնելի ու ինքնատիպ ժառանգութեան մի կարեւոր մասը: Կորցնելով արեւմտահայ գրական լեզուն, կորսուելու են մեր լեզուի ամենաճոխ ու գեղեցիկ բառերն ու դարձուածքները, աւելի քան կիսով չափ աղքատանալու է հայոց բառապաշարը (բառային ֆոնդը), արդիւնքում արեւելահայերն (ու աշխարհը) զրկուելու են մեր լեզուի գունագեղութեան ու բազմազանութեան անսպառ գանձարանին հաղորդակից լինելուց:***

Գրական արեւմտահայերէնին սպառնացող ***<u>առաջին վտանգը</u>*** անշուշտ գալիս է սփիւռքի *<u>դանդաղ ձուլման</u>* իրողութիւնից (օտար միջավայր, օտարալեզու դպրոց, հայ եկեղեցու՝ մանաւանդ Էջմիածնական թեմի, օտարալեզու արարողութիւններ, հայերի ընտանիքներում օտարախօսութիւն): ***<u>Երկրորդ մեծ վտանգը.</u>*** թող զարմանալի չկարծուի, գալիս է երիտասարդական խմբերով *Հայաստան այցելած, հայերէնի դասեր ստացած ու ետ վերադարձածներից, եւ յատկապէս <u>հայրենիքից արտագաղթած մեր հայրենակիցների գռեհիկ ու ժարգոնային արեւելահայերէնից,</u>* որով արդէն խօսել են սկսել նոյնիսկ նրանց հետ շփուող սփիւռքահայ երեխաները:

Առաջարկուող հայեցակարգում կը փորձենք Ազգային Ակադեմիայի՝ Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի հաստատութեան նորաստեղծ արեւմտահայերէնի բաժնի գործունէութեան ծիրից ներս քննարկման ներկայացնել (որպէս կարծիք) այս խնդրի շուրջ կատարուելիք աշխատանքների որոշ ուրուագծումներ:

՝

Գ) Միջնորդութիւններ իշխանութիւններին

Սփիւռքի հանդէպ նոր մօտեցումների քաղաքականութեան հռչակումը, սակայն, չամրապնդուեց իրական կեանքում լեզուական եւ ուղղագրական նոր ու ճկուն ծրագրուած քաղաքականութեամբ: Հետեւաբար արեւմտահայերի ժառանգների՝ **սփիւռքահայութեան յարատեւումը կամ սփիւռքի գոյութեան հնարաւորինս երկարաձումը պարտադրում է վերը յիշուած խնդրի լուծման ուղիներ որոնող *պետական-քաղաքական հայեցակարգ մշակելու առաջնահերթութիւն:***

Սփիւռքի եւ սփիւռքի միջնորդութեամբ օտարների կողմից Հայաստանին ու Արցախին բոլոր հարցերում սատարելու դիմաց սփիւռքի նկատմամբ հայրենիքի «պղատոնական» սէրը պէտք է փոխարինել նրանց (եւ հայրենիքի) շահերին առաւել համապատասխանող *բարոյական* աջակցութեան գործնական ու յստակ քաղաքականութեամբ: Նկատենք, որ սփիւռքը այսօր նիւթական՝ հագուստի, ուտելիքի եւայլնի օգնութեան կարիք չունի: ***Սփիւռքին պէտք է օգնել բացառապէս՝ <u>ինքնապահպանական,</u> կամ որ միեւնոյնն է՝ <u>լեզուապահպանական</u>*** **հարցերում**: Եթէ իրերի դրուածքի ընդունուած կարգին հետեւելու լինենք, մենք պիտի մտահոգուենք նախ՝ արեւմտահայերէնը պահպանելու ուղիների փնտրտուքով, ապա՝ որոշ թերիները կանոնարկելու եւ զարգացնելու խնդիրներով եւ յետոյ՝ դրանց կիրառման, տարածման հարցերով: Սակայն մեր դէպքում իրավիճակի սրութիւնը հարկադրում է, որ մենք *արեւմտահայերէնի վիճակի այս ճգնաժամային պահին լեզուի պահպանման ջանքերը զուգակցենք յընթացս կանոնարկումներով եւ անմիջապէս կեանքում գործուն կիրառումով, որովհետեւ ժամանակը աշխատում է ոչ մեր օգտին:*

Հետեւաբար, մենք պիտի ձգտենք լեզուական այս ազգօգուտ գործում ներգրաւել թէ՝ Հայաստանի իշխանութիւններին եւ թէ սփիւռքի համայնքային-ազգային կազմակերպութիւններին՝ միջնորդութիւններ ներկայացնելով նրանց՝

ա) Պաշտօնապէս *ընդունելու* ՝ ԳԱԱ Հր. Աճառեանի անուան լեզուի հաստատութեան (ինստիտուտի) արեւմտահայերէնի նորաստեղծ բաժնի գործունէութեան գերակայութիւնը արեւմտահայերէնի բոլոր հարցերում, նաեւ ճանաչել այդ բաժնի աշխատանքներին սփիւռքում աջակցող՝ լեզուական կից կառոյցի (սփիւռքեան խմբի) իրաւազօրութիւնը, զօրաւիգ լինելով (կամ մասնակցելով) խմբի կողմից ներկայացուած խորհրդատուութիւնների կատարմանը, **չբացառելով համագործակցութիւնը արեւմտահայերէնին առնչուող հարցերով գործող այլ լեզուական կառոյցների հետ:**

բ) *Աջակցելու* հայրենի եւ սփիւռքի կազմակերպութիւնների ու անհատ բարերարների օգնութեամբ անհրաժեշտ հիմնադրամի ստեղծմանը՝ *սատարելու* համար արեւմտահայերէնի ծրագրուած զարգացմանը *նպաստող միջոցառումները* (ուսումնասիրութիւններ, գործուղումներ եւ կապեր, հրատարակչական գործ, գիտաժողովներ, կրթական հարցեր եւայլն):

գ) *Հայցելու* հայրենի պետութեան անմիջական աջակցութիւնը՝ սփիւռքի հայկական դպրոցների հարցում: <u>Մեր պատկերացումով Հայաստանի իշխանութիւնները պէտք է պաշտօնապէս դիմեն մեծ կամ փոքր հայկական գաղութներ ունեցող արտասահմանեան երկրներին՝ հայաշատ համայնքներում տուեալ պետութեան միջոցների հաշուին՝ առանց ուսման վարձի, բայց ուսուցիչներին աշխատավարձ վճարելով, պահել հայկական դպրոցներ (կամ իրենց դպրոցներում հայկական դասարաններ)՝ տուեալ երկրի պետական ծրագրերին զուգահեռ դասաւանդելու համար բացառապէս</u>

մայրենի լեզու եւ հայոց պատմութիւն՝ Հայաստանի աշխարհագրութեան հետ միասին, ընդգրկելով հայ համայնքի *բոլոր* երեխաներին: Այս հարցի կարեւորութիւնը բխում է այն իրողութիւնից, որ, մի կողմից ոչ բոլոր ծնողներն են ի վիճակի վճարելու իրենց *բոլոր* զաւակների ուսման բարձր վարձը, իսկ միւս կողմից համայնքները չեն կարողանում լիարժէք վճարել որակեալ ուսուցչին: Արդիւնքում հայ ծնողների մեծ մասը իրենց զաւակներին ղրկում են տուեալ երկրի տեղական «պետական» դպրոցները, ինչը նպաստում է արդէն հայաթափուած յաջորդ սերունդ ունենալուն: Միաժամանակ, սոյն կէտի տիրոյթում նշուած կրթական հարցերի կազմակերպման միջոցառումներում պէտք է յատուկ արժեւորել ազգիս վաստակաշատ *Մելգոնեան վարժարանի* ունեցած եւ ունենալիք *փեթակային* դերը՝ արեւմտահայերէնի պահպանման, զարգացման, ուսուցման ու տարածման գործում եւ ըստ այդմ՝ հայրենի իշխանութիւնների ուշադրութեանը յանձնելու հետեւեալ փաստարկումները.
---Քանի դեռ կայ եւ լինելու է հայ սփիւռքը, նրա գոյատեւման եւ հայկական ինքնութեան պահպանման հիմքը *եղել է* եւ *է՛* լեզուապահպանումը,
--- Նկատի առնելով, որ *հայրենիք-- սփիւռք միասնականանացման կարգախօսով* արդէն պետական հայեցակարգ է հռչակուած եւ պետականօրէն գիտակցւում է այդ որդէգրուած քաղաքականութեան իրականացման համար արեւմտահայերէն գրական լեզուի եւ սփիւռքի պահպանման ու յարատեւման գործօնը (վերը նշուած Ա) կէտը). օրինակ՝ սփիւռքում գործող հայագիտական որոշ կեդրոնների եւ հայրենիքի համագործակցական պարտաւորութիւնները,
--- Շնորհակալութեամբ գնահատելով բազում տասնամեակների ընթացքում *ՀԲԸՄ-ի*, սփիւռքի այլ բարերարների դերը Մելգոնեանի պահպանման գործում, ինչպէս նաեւ այդ վարժարանի տարբեր սերունդների շրջանաւարտների եւ նրանց ուսուցիչների ունեցած վաստակը սփիւռքում արեւմտահայերէնի ուսուցման ու տարածման ասպարէզում,
--Հաշուի առնելով, որ հայրենիքում ու ներքին (նախկին Խորհրդային) սփիւռքում այսօր նոյնպէս ունենք ազգային բարերարների նորաստեղծ, գործուն փաղանգ, *հետեւաբար հնարաւոր համարել* հայրենիքի պատկան մարմիններին ներկայացնելու պետութեան հոգածութեան ներքոյ եւ այդ նոր բարերաների սատարումով Միլգոնեանը վերաբացելու առաջարկ:
--Միաժամանակ, հայրենի իշխանութիւնների միջոցով հասնել այն բանին, որ արտասահմանեան հայագիտական կեդրոնների հետ համագործակցող հաստատութիւնների գործակցութիւնը, նաեւ «Արի տուն» ծրագրով սփիւռքի երեխաների հայերէնի դասերի ուսուցումը կամ ուսանողների պատրաստումը հայրենիքում, *իրականանան միայն արեւմտահայերէնով:*
դ) Առաջ քաշելու տուեալ երկրում հայալեզու մանկական ֆիլմերի ալիք *ունենալու հարցը:* Խնդիրն այն է, որ հայ երեխաները արդէն 2-3 տարեկանում (անկախ այն բանից, որ ծնողները նոյնիսկ չգիտեն այդ երկրի լեզուն) տիրապետում են տուեալ երկրի օտար լեզուին՝ ամէն օր հեռարձակուող մանկական մուլտ. ֆիլմերի շնորհիվ: Մեր հայկական հեքիաթների բարբառային լեզուն եւ մանկական խրթին ֆիլմերը սփիւռքահայ մանուկին անհասանելի են, ուստի հարկ կը լինի կիրառել կամ ստեղծել օտար լեզուից *գրական* հայերէնի թարգմանող յատուկ աւտոմատ սարքեր, որպէսզի հայ մանուկը վաղ տարիքից սկսած կարենայ ամէն օր հետեւել հայերէն հաղորդումներին՝ այդ կերպով տիրապետելու համար մայրենիին, որովհետեւ մեր «զարգացած» ծնողները ընտանիքում յաճախ օտարախօս են դառնում՝

անկախ ունեցած մակարդակից: Նկատի առնենք, որ շատ տեղերում գործում են հայկական մէկ ժամեայ հաղորդումներ, որոնց լուրերի փոխարէն (դրանք հասանելի են համացանցով, հեռատեսիլով ու մամուլով) ցանկալի է տալ մանկական հայերէն ծրագրեր:

ե) *Լուծելու համար* սփիւռքի հայկական դպրոցներում արեւելահայերէնում պահպանուած եռահունչ համակարգի արտասանութեան (հնչումի) եւ երկու ճիւղերի մերձեցմանը նպաստող լեզուական որոշ կարեւոր ընդհանրացումներ *ուսելու* խնդիրը՝ Հայաստանից գործուղուած, արեւմտահայերէնին եւ դասական ուղղագրութեանը ծանօթ ուսուցիչների միջոցով:

-- Հարցը վերաբերում է մեր գրաբարից աւանդուած *եռահնչիւն (բ.պ.փ,- գ.կ.ք,- դ.տ.թ,- ձ.ծ.ց-, ջ.ճ.չ.) արտաբերմանը վարժեցնելուն* ՝ յատկապէս դասական սփիւռքի ընտանիքների զաւակների համար:

--Եռահունչ ուսուցումը նաեւ պահանջուող պայման է առաջիկայում ստեղծուելիք համազգային հայկական *միասնական տառադարձութիւնից* օգտուել կարենալու համար, որովհետեւ անիմաստ է արեւելահայի եւ արեւմտահայի տարբեր հնչումների պատճառով ստեղծել տարբեր *տառադարձական համակարգեր:*

--Անհրաժեշտաբար, պէտք է նաեւ ուսուցել որոշ ընդհանուր եզրոյթներ: Օրինակ՝ արեւմտահայ երեխային minute-ը սովորեցնել ոչ թէ որպէս վայրկեան, այլ՝ *րոպէ*, իսկ second-ը *երկվայրկեանի* փոխարէն՝ *վայրկեան:* Եւ քանի որ second նշանակում է ե'ւ *երկրորդ,* ե'ւ *վայրկեան,* հաւանաբար այս երկու իմաստի թարգմանութեամբ էլ, ըստ մեզ, ստեղծուել է *երկվայրկեան արհեստական եւ* սխալ բառը:

--Սփիւռք հրաւիրուած ուսուցիչները պէտք է իրականացնեն ուսուցման պարտադիր միակերպութիւն՝ ընդհանուր դասական ուղղագրութեամբ, թոյլ չտալով պարսկահայ կամ հայաստանեան տարբեր ուղղագրութիւնների գործածում:

զ) *Ապահովելու* հայրենիքի (բնականաբար նոյնը՝ սփիւռքի) դպրոցներում մայրենի լեզուի դասաւանդումը՝ մեր գրական լեզուների ընդհանուր բառապաշարի ուսուցմամբ: Սա եւս կը նպաստի լեզուական երկու հատուածների մերձեցմանը, նպաստելով միմեանց հաղորդակցուելիս փոխհասկացութեան մեծացմանը, արեւմտահայ եւ արեւելահայ գրականութեան դիւրըմբռնմանը, հայերէնի օգտագործուող բառապաշարի (փոխ)հարստացմանը եւայլն (օրինակ՝ճերմակ-սպիտակ, սեպել- համարել կամ կարծել, այպանել-նախատել կամ անարգել,):

է) ***Արեւմտահայերէնի «բնակեցումը» Հայաստանում*** *(յատուկ ընդգծում եմ):* Այս հարցադրումը ամենակարեւորն է՝ մեր նպատակադրման տեսակէտից եւ ունի երկու կարեւոր հանգրուան՝ մօտակայ եւ հեռագնայ: Դրանցից առաջինը՝ մօտական, արդէ'ն պահանջուած է, մանաւանդ այժմ հայրենիքում գործող երկքաղաքացիութեան օրենքի ընձեռնած հնարաւորութիւնների շնորհիւ: Բնականաբար, հարկ է հայրենիքում դիւրացնել սփիւռքահայի հաղորդակցման հնարաւորութիւնները, որովհետեւ այսօր բացի սովորական զբօսաշրջութեան պահանջներից, մէջտեղ են եկել այլ ծրագրեր, որոնք մեծացնում են սփիւռքահայերի հոսքը դէպի հայրենիք: Դրանք են՝ «Արի տուն» ծրագիրը եւ երիտասարդական խմբերի այցելութիւնները, կամ՝ հայրենիքում տարբեր բնագաւառներին վերաբերող մասնագէտների համահայկական կառոյցների ստեղծումը եւ դրանց պարբերաբար համահայկական հաւաքների անցկացումը

հայրենիքում, գործարարութեան (բիզնեսի) գնալով ծաւալուող միտումները, Հայաստանում անշարժ սեփականութիւն գնելու (հող, տուն, ամառանոց՝ արձակուրդները երկրում անցկացնելու համար) նկատուող աճը եւ վերջապէս, մշտական բնակութեան եկողների թէեւ փոքր, սակայն առկայ տենդենցը, մանաւանդ հայկական գաղթօճախներ ունեցող երկրներում պատերազմական իրավիճակների պատճառով, ինչպէս Իրաքի կամ Սիրիայի դէպքերում:
-- Վերջերս հալեպահայերի ներգաղթի առընչութեամբ յիշեցի 2-3 տարի առաջ «Մեսրոպեան Ուխտ»ից մեր ընկերոջ՝ Վաղարշակ Վարդանեանի առաջարկը՝ արեւմտահայերի փրկութեան վերաբերեալ: Նա առաջարկում էր Հայաստանի որոշակի տարածքում ստեղծել ինքնակառավարուող մի առանձին «գաճաճ» «Արեւմտահայաստան», բնակեցուած սփիռքահայերով (անկախ պետութիւն՝ պետութեան մէջ): Ես առաջարկեցի ստեղծել արեւմտահայերի պահպանման համար պետականօրէն երաշխաւորուած *պատսպարանավայրեր* (այսինքն *«ռեզերուացիաներ»,* ինչպէս ԱՄՆ-ի ամերիկեան հնդկացիներինը): Դրանցում առնուազն մի քանի սերունդ կը կարողանային ապրել իրենց նիստ ու կացով, մշակոյթով, աւանդոյթներով եւ *յատկապէս արեւմտահայերէն լեզուի պահպանումով*: Ես նկատի ունէի իմ տեսած նախկին փորձը, երբ արտասահմանի Մալաթիոյ Կրթասիրաց Հայրենակցական Միութիւնը 1927-ին Հայաստանում հիմնեց Նոր Մալաթիա աւանը եւ այնտեղ բնակուեցին տարբեր երկրներից ներգաղթած մալաթիացիները, ապրելով Արեւմտահայաստանի Մալաթիայի կեանքով՝ մինչեւ 1939-40թ.թ. երբ Մոսկուայի որոշմամբ լեռնային գիւղերը վերացուեցին եւ մարդկանց քոչեցրին հարթավայրեր, Երեւանի շրջակայքը: Այդ որոշման հետեւանքով Սիւնիքի, Ապարանի, Կոտայքի շրջանների գիւղերից վերաբնակեցրին Նոր Մալաթիա: Նոյնն էր Արաբկիրի, Սեբաստիայի, Խարբերդի պարագան: *Դրանք իւրատեսակ ռեզերուացիաներ էին*, որ, ցաւօք, պետութիւնը չպահպանեց, իսկ յետոյ միացրեց Երեւան քաղաքին: Այսօր Աշտարակ քաղաքում հալեպահայերի համար բնակելի զանգուած են կառուցում: Եթէ պետութիւնը երաշխաւորի այդ հատուածի պահպանումը՝ առանց խառնելու ուրիշ տեղերի բնակիչների հետ, դա կը լինի հալեպահայերի՝ ոչ միայն մշակոյթի, բարքերի, ապրելակերպի (ընդհուպ խոհանոցը), այլ նաեւ *նրանց մայրենիի՝ արեւմտահայերէնի պահպանման լաւագոյն ձեւը* (իհարկէ, չի բացառւում աւելի ուշ, յետագայում տեղացիների հետ միաձուլման հնարաւորութիւնը): Այս մանրամասնութիւնը կարեւոր եմ համարում որպէս վերը նշածս՝ Հայաստանում *արեւմտահայերէնի «բնակեցման»* կարծիքին ի նպաստ փաստարկ եւ առաջարկ՝ հայրենի իշխանութիւններին: Սակայն այդ *բնակեցումը* կարող է լիարժէք լինել միայն *հեռագնայ ծրագրի* դէպքում: Այժմ դրա մասին:

Պատմական փորձը ցոյց է տալիս, որ, ի վերջոյ, սերունդներ անց, հայերի ձուլումը օտար երկրներում անխուսափելի է, մանաւանդ որ իսլամական երկրներից արագացուած արտագաղթը ուղղւում է դէպի Եւրոպա, Ամերիկա, ուր, կեանքի եւ ազատութեան լաւագոյն պայմաններից բացի, նաեւ կրօնական պատնէշի բացակայութեան պայմաններում խառն ամուսնութիւնները նոյնպէս նպաստում են ձուլումին: Այդ դէպքում վերանալու է գեղեցիկ ու ճոխ *արեւմտահայերէնը եւ այդ լեզուն կրողը:* Անկարելի է Հայրենիքում յարատեւող արեւելահայերէնով փոխանցել արեւմտահայերէնին բնորոշ գեղեցկութիւնը: Հնարաւոր չէ պահպանել Հ.Պարոնեանի երգիծանքի համն ու հոտը՝ արեւելահայերէն թարգմանելով, ոչ էլ պահպանել Դուրեանի կամ Մեծարենցի

բանաստեղծութիւնների հմայքը: Այստեղ տեղին է ղեկավարուել Մանուկ Աբեղեանի խորհրդով. *«Եթէ ուզում էք գրական լեզու ունենալ, արեւելահայ աշխարհաբարը պետք է հասկանալի լինի արեւմտահայերին եւ հակառակը... Ուղղագրութեան միասնութիւնը եւ* ընդհանրութիւնը պայման է...»: Այո', հակառակ դէպքում արեւմտահայ արժէքները դուրս կը մնան մեր առօրեայ շրջանառութիւնից: Վերը նշեցինք, թէ ինչ է նշանակում կորցնել մեր արեւմտահայ մշակոյթով ստեղծուած համաշխարհային մեր նուաճումները, Սերունդները մեզ չեն ների: Հետեւաբար, յաւերժ գոյատեւող Հայաստանն է մեր գրական լեզուի միւս կարեւոր ճիւղի (չեմ ուզում ասել՝ երկրորդ ճիւղի)՝ արեւմտահայերէնի գոյատեւման ու պահպանման միակ երաշխիքը: *Եւ դրա հիմքը այսօ'ր է դրուելու: Պետականօրէ'ն:* ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Լեզուի Հաստատութեան արեւմտահայերէնի նորաստեղծ կազմակերպութիւնն է ***հիմնաւորելու եւ պահանջելու*** **երկրի ղեկավարներից՝ առնելու հետեւեալ քայլերը.**

1) Հայաստանի դպրոցների եւ Պետական ու Մանկավարժական Համալսարանների ուսումնական ծրագրերում մտցնել արեւմտահայերէնի պարտադիր ուսուցում (գրաւոր եւ բանաւոր):

2) Արեւմտահայերի (սփիւռքահայերի) ստեղծած գրականութիւնը, որպէս կանոն, չթարգմանել արեւելահայերէնի եւ հրատարակել միայն գրողի լեզուով ու դասական ուղղագրութեամբ:

3) Ստեղծել համահաւաք՝ երկու գրական լեզուների միացեալ բառապաշարով (գոնէ «օնլայն») նոյնիմաստ, բայց տարանուն բառերի բառարաններ, նոյն յօդուածում *միաժամանակ* զուգահեռաբար տալով երկու ճիւղերի հոմանիշ բառերը, առանց աւանդական այբբենական հերթականութեան պահպանման (օրինակ՝ *ատամ* բառի կողքին անմիջապէս կցել *ակռայ* բառը, *ժամանակ* բառի կողքին անմիջապէս դնել *ատեն* բառը կամ՝ ամաչել-խպնել, սառը -պաղ):

4) Հայրենիքում արեւմտահայերէնով հրատարակել թերթեր, պարբերականներ, հաղորդել ռադիո եւ հեռատեսիլային ծրագրեր, կազմակերպել ասմունքի երեկոներ, ստեղծել արեւմտահայերէնով թատրոն կամ եղած թատրոններում սահմանել յատուկ օրեր:

5) Արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցմանը նպաստելու, եւ սփիւռքում եւ հայրենիքում ընդհանուր օգտագործման նպատակով, ստեղծել օտար կամ միջազգային բառեզրերի հայկական համարժէքների ընդհանուր միասնական բառարան:

6) Թոյլատրել Հայաստանի քաղաքացիներին՝ պետական հաստատութիւնների հետ գրագրութիւն վարել նաեւ իրենց իմացած արեւմտահայերէնով: Այս համատեքստում՝ *պաշտօնապէս պետական լեզուն արեւելահայերէնը համարելով հանդերձ, երկու գրական հայերէնների իրաւունքները պէտք է հաւասար նկատել:*

Սպասելի է, որ ՀՀ Գիտ.Ազգ.Ակադեմիայի կառոյցում արեւմտահայերէնի նորաստեղծ բաժինը (ղեկավար՝. Ակադեմիայի թղթ. անդամ, դոկտ. փրոֆ.Արտեմ Սարգսեան) «Մեսրոպեան Ուխտ»ի համագործակցութեամբ, Հր. Աճառեանի անուան լեզուի հաստատութեան եւ սփիւռքի նախարարութեան խողովակներով սերտօրէն կը զբաղուի այս հայեցակարգը կեանքի կոչելու հարցերով:

15 Յուլիսի 2013 Ռոտ-Այլընտ,,(ԱՄՆ)

Յ.Գ. Արեւմտահայերէնի գրաւորի միակերպութեան հարցը՝ կը ներկայացուի առանձին: